

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԳՅՈՒՄՐՈՒ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ» ՊՈԱԿ

Հետազոտական աշխատանք

ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2023

Թեմա՝

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Առարկա՝ ՆԶՊ

ՈՒՍՈՒԳԻՇ՝ Թագվորյան Համազասպ

Ղեկավար՝ Հայրապետյան Արմեն

Գյումրի 2023

Բովանդակություն

Էջ

Ներածություն.....	3
1. ՄՄԻ հասկացությունը:.....	6
1.1 Միջազգային մարդասիրական իրավունքի սկզբունքները:.....	9
1.2 Զինված ընդհարումների ընթացքում կիրառվող մարդասիրական իրավունքի հիմնական նորմերը:.....	12
2. Պատերազմի ժամանակ անպաշտպան մարդկանց հովանավորումը: Ժնևի իրավունք:.....	14
Ա. Անպաշտպան անձանց նկատմամբ մարդասիրական վերաբերմունք ապահովելու ընդհանուր պարտականությունը:.....	14
Բ. Վիրավորներ, հիվանդներ:.....	15
Գ. Ռազմագերիներ:.....	17
Դ. Քաղաքացիական բնակչություն:.....	20
2.1 Քաղաքացիական բնակչության և քաղաքացիական օբյեկտների պաշտպանությունը:.....	22
ա. Ռազմական օբյեկտներ:.....	22
բ. Քաղաքացիական օբյեկտներ:.....	22
գ. Զինված ընդհարումների զոհերի պաշտպանության կանոններ:.....	24
2.2 Մարտական գործողությունների վարման արգելված եղանակներն ու միջոցները:.....	25
Եզրակացություն.....	30
Գրականության ցանկ.....	32

Ներածություն

Միջազգային մարդասիրական իրավունքը միջազգային հանրային իրավունքի կարևոր ճյուղերից է: Այն բաղկացած է այնպիսի նորմերից, որոնք զինված ընդհարումների ժամանակ պաշտպանում են այն անձանց, ովքեր չեն մասնակցում կամ դադարել են մասնակցելուց ռազմական գործողություններին և սահմանափակում են պատերազմելու մեթոդների և միջոցների կիրառումը: Ավելի ստույգ՝ զինված ընդհարումների ժամանակ գործող միջազգային մարդասիրական իրավունք ասելով՝ ենթադրվում է միջազգային պայմանագրային կամ ավանդույթային այն նորմերը, որոնք հատուկ նախատեսված են անմիջականորեն միջազգային կամ ոչ միջազգային բնույթի զինված ընդհարումների հատկանքով առաջացող և մարդասիրական առումով մտահոգություն պատճառող խնդիրները կարգավորելու համար:

Մարդասիրական նկատառումներից ելնելով՝ վերոհիշյալ նորմերը սահմանափակում են ընդհարման մեջ գտնվող կողմերի՝ իրենց ընտրությամբ պատերազմելու մեթոդներ և միջոցներ կիրառելու ազատությունը և պաշտպանում են ընդհարումից տուժած կամ նման վտանգի ենթակա գտնվող մարդկանց և գույքը: Միջազգային բնույթի զինված ընդհարումն առնվազն երկու պետությունների զինված ուժերի բախումն է (հարկ է նշել, որ ազգային-ազատագրական պատերազմները նույնպես դիտվում են որպես միջազգային բնույթի զինված ընդհարումներ): Ոչ միջազգային բնույթի զինված ընդհարումը որևէ պետության տարածքում վերջինիս կանոնավոր զինված ուժերի և կազմակերպված զինված խմբերի, կամ այդպիսի զինված խմբերի բախումն է: Որպեսզի բախումը համարվի ոչ միջազգային բնույթի զինված ընդհարում՝ այն պետք է հասնի լարվածության որոշակի աստիճանի և շարունակվի որոշակի ժամանակահատվածի ընթացքում: Ներքին անկարգությունները բնութագրվում են որպես ներքին կարգուկանոնի լուրջ խախտումներ, որոնք պայմանավորված են բռնարարքներով, սակայն զինված ընդհարումներ չեն (օրինակ՝ զանգվածային անկարգություններ, խմբավորումների միջև իշխանությունների դեմ ուղղված բռնարարքներ):

Աշխատանքի մեջ ներկայացվում է միջազգային մարդասիրական իրավունք հասկացությունը: Աշխատանքի մեջ պարզաբանվում է անպաշտպան անձանց

նկատմամբ մարդասիրական վերաբերմունք ապահովելու ընդհանուր պարտականությունները: Վիրավորների, հիվանդների, ռազմագերիների և քաղաքացիական բնակչության հետ վարվելու կանոնները: Առանձնացվում է նաև քաղաքացիական բնակչության և քաղաքացիական օբյեկտների պաշտպանությունը, ինչպես նաև զինված ընդհանրումների զոհերի պաշտպանության կանոնները:

Աշխատանքը բաղկացած է 2 գլուխներից՝ յուրաքանչյուրն իրենց հերթին բաժանված են 2 ենթավերնագիրների, ներածությունից, բովանդակությունից, գրականության ցանկից և եզրակացությունից:

Առաջին գլխում ներկայացվում է <<ՄՄԻ հասկացությունը>>: Առաջին գլխի առաջին ենթավերնագիրը <<ՄՄԻ սկզբունքներն>> է, որտեղ ներկայացվում է ՄՄԻ սկզբունքները իրենց գործունեությամբ: Առաջին գլխի երկրորդ ենթավերնագիրը <<Զինված ընդհանրումների ընթացքում կիրառվող ՄՄԻ հիմնական նորմերն>> են, որտեղ ներկայացվում է ՄՄԻ հիմնական նորմերը առանձին-առանձին:

Երկրորդ գլխում ներկայացված է <<Պատերազմի ժամանակ անպաշտպան մարդկանց հովանավորումը: Ժնևի իրավունքը>>: Երկրորդ գլխի առաջին ենթավերնագրում ներկայացված է <<Քաղաքացիական բնակչության և քաղաքացիական օբյեկտների պաշտպանությունը>>: Որտեղ նշվում է քաղաքացիական բնակչության և քաղաքացիական օբյեկտների նկատմամբ հարգանքն ու պաշտպանությունը ինչպես նաև տարբերակումը քաղաքացիական բնակչության և մարտիկների միջև: Երկրորդ ենթավերնագրում ներկայացվում է <<Մարտական գործողությունների վարման արգելված եղանակներն ու միջոցները>>: Այստեղ նշվում է մարտական գործողությունների հետ կապված, քաղաքացիական բնակչության շրջանում անհիմն զոհերից ու անտեղի տառապանքներից և բնական միջավայրին լայնածավալ, երկարաժամկետ ու լուրջ վնաս պատճառելուց խուսափելու նպատակով, մարտնչող կողմերի համար մարտական գործողությունների վարման եղանակները ու միջոցները:

ՄՄԻ-ը պատմության ընթացքում կրել է իր տրամաբանական զարգացումը:
Յուրաքանչյուր նոր պատերազմի փորձ խթանել է մարդասիրական իրավունքի
կարգավորման շրջանակների ընդլայնմանը, նոր դրույթների նախատեսմանը:

Թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ ՄՄԻ-ը պատերազմի
չարիքից մարդկանց պաշտպանելու՝ խորը և նպատակային արմատներ ունի, որոնք
գնում են մարդկային հասարակության խաղաղ և բնականոն զարգացման
ուղղությամբ:

Այս թեմայի հիմնական խնդիրն է ցույց տալ ՄՄԻ դերը զինված ընդհանրումների
ժամանակ:

Գլուխ 1. ՄՄԻ հասկացությունը

Իրավաբանական գրականության մեջ և ՄԱԿ-ի միջազգային փաստաթղթերում լայնորեն կիրառվում է <<միջազգային հակամարտությունների իրավունք>> անվանումը: Հայտնի է միջազգային իրավունքի տվյալ ճյուղի ևս մեկ անվանում <<պատերազմի իրավունք>>: <<Միջազգային մարդասիրական իրավունք>> եզրույթն առաջին անգամ օգտագործվել է անցած դարի 50-ական թվականներին՝ հայտնի շվեդարիացի իրավաբան Ժան Պիկտեի կողմից և համեմատաբար կարճ ժամանակահատվածում լայն տարածում է ստացել:

ՄՄԻ-ը ինչպես միջազգային այնպես էլ ոչ միջազգային հակամարտություններում կիրառվող այն իրավաբանական սկզբունքների և նորմերի ամբողջական համակարգն է, որոնք սահմանում են միջազգային իրավունքի սուբյեկտների փոխադարձ իրավունքները և պարտականությունները՝ զինված պայքարի որոշ միջոցների և մեթոդների արգելման կամ կիրառման սահմանափակման, այդ պայքարի ընթացքում հակամարտության գոհերի պաշտպանության ապահովման կապակցությամբ, և որոնք նախատեսում են պատասխանատվության՝ այդ սկզբունքները և նորմերը խաղտելու համար:

ՄՄԻ-ի գործառույթների մասին խոսելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ ի տարբերություն միջազգային իրավունքի մյուս ճյուղերի, որոնց հիմքը հնարավոր հակամարտություններն առանց ուժային միջոցների գործադրման լուծելու ձգտումն է, միջազգային մարդասիրական իրավունքն ուղղված է բռնության գործադրումը պետությունների միջև փոխհամաձայնեցված որոշակի նորմերի ենթարկելու:

Պատերազմ վարելու կանոնների կարգավորման առարկա են յուրահատուկ հասարակական հարաբերությունները, որոնք ձևավորվում են զինված հակամարտությունների ընթացքում:

Միջազգային զինված հակամարտությանը զինված բախումն է միջազգային իրավունքի սուբյեկտների՝ պետությունների միջև կամ ազգային-ազատագրական շարժման և պետությունների միջև: Ոչ միջազգային բնույթի զինված հակամարտությունը հակակառավարական կազմակերպված զինված ջոկատների

զինված բախումն է կառավարության զինված ուժերի հետ, որը տեղի է ունենում որևէ մեկ պետության շրջանակներում:

Պատերազմ վարելու կանոններով տվյալ հարաբերությունների միջազգային իրավական կարգավորման նշանակությունն անընդմեջ աճում է: Դա բացատրվում է նրանով, որ կանոնները սահմանափակում են պատերազմողներին՝ ռազմական գործողություններ վարելու միջոցների և մեթոդների ընտրության հարցում կանոնակարգում են քաղաքացիական բնակչության, վիրավորների, հիվանդների և ռազմագերիների դրությունը, արգելում են պաշտոնապես վարելու բարբարոսական միջոցները (ինչը հատկապես կարևոր է զանգվածային ոչնչացման զենքի տարբեր տեսակների առկայության և զարգացման կապակցությամբ), կանոնակարգում են չեզոք պետությունների դրությունը:

Միջազգային մարդասիրական իրավունքն ընդգրկում է երկու բնագավառ՝

- Պատերազմ վարելու եղանակների (զենքի որոշակի տեսակների և ռազմական գործողություններ վարելու որոշակի մեթոդների՝ ներառյալ ռազմական մարտավարությունը) առնչությամբ սահմանափակումների սահմանումը:
- Ռազմական գործողություններին անմիջական մասնակցություն չունեցող կամ մասնակցությունը դադարեցրած անձանց պաշտպանությունը:

Միջազգային մարդասիրական իրավունքի՝ սերտորեն փոխկապակցված սակայն իրավական և կազմակերպման առումով հարաբերականորեն ինքնուրույն այս երկու ուղղություններն ստացել են <<Հաագայի իրավունք>> և <<ժնկի իրավունք>> անվանումները: <<Հաագայի իրավունքը>> կամ <<պատերազմի իրավունքը>> պայմանավորում է ռազմական գործողություններ իրականացնելիս պատերազմող կողմերի իրավունքներն ու պարտականությունները և սահմանափակում է վնաս պատճառելու միջոցների ընտրությունը: <<ժնկի իրավունքը>> կամ բուն մարդասիրական իրավունքը պաշտպանում է շարքից դուրս եկած զինվորականների և մարտական գործողություններին չմասնակցող անձանց շահերը:

<<Ժնկի իրավունքի>> իրավական հիմքը Պատերազմի զոհերի պաշտպանության մասին Ժնկի 1949 թ. չորս կոնվենցիաներն են չ դրանց 1977թ. Երկու լրացուցիչ արձանագրությունները, որոնք զինված հակամարտության ժամանակ մարդու պաշտպանությանն ուղղված կանոնների համակարգն է և, ի տարբերություն <<Հաագայի իրավունքի>>, չեն ընձեռում պետություններին որևէ իրավունքներ՝ ի վնաս անհատի:

ՄՄԻ-ի զարգացումը հանգեցրել է նրան, որ 1977թ. Լրացուցիչ արձանագրություններում մտցվել էին կոմբանտանտներին վարքագծի վերաբերյալ դրույթներ, որոնք նախկինում ավանդաբար վերաբերում էին <<Հաագայի իրավունքին>>:

ՄՄԻ-ի սուբյեկտներն են ինքնիշխան պետությունները, իրենց ազատության և անկախության համար պայքարող ազգերը և ժողովուրդները, որոշ միջազգային միջկառավարական կազմակերպություններ:

ՄՄԻ-ի դրույթների իրացման համակարգում առանձնահատուկ տեղ ունի Կարմիր խաչի միջազգային կոմիտեն: ԿԻՄՍԿ առանձնահատկությունը, որով նա տարբերվում է միջազգային հարաբերություններին մասնակցող մյուս բոլոր մարմիններից և ինստիտուտներից այն է որ, տվյալ կազմակերպությունը սկզբնապես ստեղծվել էր Շվեցարիաի քաղաքների կողմից, սակայն հետագայում պետությունների կամքով, Ժնկի կոնվենցիաների դրույթների ուժով վեր է ածվել ինստիտուտի, որն օժտված է միջազգային միջկառավարական կազմակերպությանը հատուկ իրավասությամբ:

1.1 Միջազգային մարդասիրական իրավունքի սկզբունքները

ՄՄԻ-ի սկզբունքների կայացումը և իրավաբանական ամրագրումը օբյեկտիվ անհրաժեշտություն են, որը պայմանավորված է մի կողմից ռազմատեխնիկական ոլորտի, մյուս կողմից միջազգային իրավունքի գիտության փոփոխություններով: ՄՄԻ-ի սկզբունքները և նորմերը կոչված են դառնալու իրավական պատնեշ՝ կամայականության և զինված հակամարտության ընթացքում ծագող հիմնախնդիրների դեմ, քանի որ դրանք պատերազմող կողմների վարքագծի հիմնարար կանոններ են:

Պետությունները նույնպես պետք է հետևեն, որպեսզի իրենց ներքին օրենսդրությունը համապատասխանի միջազգային մարդասիրական իրավունքի որոշակի նորմերին և սկզբունքներին: Եթե ներպետական նորմերը հակասում են զինված հակամարտությունների իրավունքի սկզբունքներին և նորմերին, ապա դրանք ընդունված պետությունը պետք է վերացնի այդ հակասությունը և պատասխանատվություն կրի դրանց խաղտման դեպքում:

ՄՄԻ-ի *մարդասիրության սկզբունքն* արգելում է ռազմական այնպիսի բռնության գործադրումը, որն անհրախեշտ չէ պատերազմ վարելու նպատակների համար:

Մարդասիրության սկզբունքը իրավանորմերի տվյալ համակարգի ամենաընդհանրացված սկզբունքն է: Մյուս բոլոր սկզբունքները կարծու, կազմում են դրա առանձին եզրերը և դրա որոշակիացումը և շարունակությունն են:

ՄՄԻ-ի հաջորդ սկզբունքը *խտրականության անթույլատրելիությունն* է, որի բոլոր դեպքերում և անկախ զինված հակամարտության բնույթից ու ծագումից, այն անհատներին, ովքեր օգտվում են մարդասիրական կոնվենցիաների պաշտպանությունից, պետք է վերաբերվել առանց որևէ խտրականության անկախ ռասայից, մաշկի գույնից, դավանանքից, սեռից, գույքային դրությունից:

ՄՄԻ-ի նորմերի և սկզբունքների խաղտման համար պատասխանատվության սկզբունքը ներառում է պետությունների միջազգային իրավական պատասխանատվությունը և ֆիզիկական անձանց պատասխանատվությունը: Այդ

սկզբունքը պատերազմի օրենքների և սովորույթների գոյության տրամաբանական հետևանքն է և հիմնված է միջազգային իրավական պահանջները չպահպանելու համար զինված հակամարտությունների մասնակիցների պատասխանատվությունը սահմանող մի շարք կոնկրետ նորմերի վրա:

Զինված պայքարի միջոցների ընտրության հարցում պատերազմողների սահմանափակման սկզբունքը սահմանում է, որ զինված հակամարտության դեպքում պատերազմ վարելու միջոցների և մեթոդների ընտրության՝ հակամարտության մեջ գտնվող կողմերի իրավունքն անսահմանափակ չէ: Նշված սկզբունքի բովանդակությունը բացահայտում է զենքի որոշակի տեսակների գործադրումն արգելող ընդհանուր և հատուկ նորմերում: Հատուկ են այն նորմերը, որոնք ներառված են միջազգային պայմանագրերում և արգելում են զենքի որոշակի տեսակներ: Ընդհանուր նորմերը պատերազմողներին պարտավորեցնում են չկիրառել այնպիսի զենք, որն ունի ոչ ընտրական գործողություն ինչպես ռազմական այնպես էլ քաղաքացիական օբյեկտների դեմ, պատճառում է ավելորդ վնասվածքներ կամ տառապանքներ:

Շրջակա միջավայրի պաշտպանության սկզբունքի համաձայն մարտական գործողությունների ժամանակ պետք է հոգ տանել լայնածավալ, երկարաժամկետ և լուրջ վնասից բնական միջավայրի պաշտպանության համար: Այդպիսի պաշտպանությունը ընդգրկում է պատերազմ վարելու այնպիսի մեթոդների և միջոցների արգելումը, որոնք նպատակ ունեն պատճառել կամ, ինչպես կարելի է ակնկալել վնաս կպատճառեն բնական միջավայրին և դրանով իսկ՝ բնակչության առողջությանը կամ կյանքին:

Իրավունքի պաշտպանության սկզբունքի համաձայն՝ ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակում պետությունը պետք է ապահովի իր իշխանության ներքո հայտնված անձանց պաշտպանությունը:

Այդ սկզբունքը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հանգամանքները՝

- Գերին գտնվում է ոչ թե իրեն գերած գորքերի այլ այն պետության իշխանության ներքո, որին ծառայում են այդ գորքերը,
- Պետությունը պատասխանատվություն է կրում իր կողմից գերի վերցված անձանց համար,
- Ռազմագերիները պետք է ապահովվեն միջազգային պաշտպանությամբ:

Մարտական գործողություններին անմիջական մասնակցությունը դադարեցրած անձանց անձեռնմխելիության սկզբունքի համաձայն՝

- Սպանել կարելի է միայն այն զինվորին, որն ինքն է սպանելուն պատրաստ: Մարտի դաշտում ընկածը անձեռնմխելի է, ինչպես և գերի հանձնվող հակառակորդը՝ նա իր կյանքի պահպանման իրավունք ունի,
- Յուրաքանչյուր ոք, այդ թվում և հակառակորդը, ունի իր կյանքի նկատմամբ հարգանքի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իր անձի նկատմամբ հարգանքի իրավունք:

Նշված սկզբունքը սերտորեն կապված է ոչ կոմբատանտների անձեռնմխելիության հետ, ըստ այդմ՝ իր զինված ուժերին օգնություն ցուցաբերող, սակայն անմիջականորեն մարտական գործողություններին չմասնակցող կազմի նկատմամբ չի կարող կիրառվել զենք և նա պետք է օգտվի հակառակորդի հարգանքից և հովանավորությունից բոլոր դեպքերու, բացառությամբ մարտական գործողություններին անմիջական մասնակցության դեպքերի:

Ժամանակակից միջազգային իրավունքում ձևավորվել է չհարձակվելու հիմնարար սկզբունքը, ըստ որի՝ քաղաքացիական բնակչությունը, որպես այդպիսին, ինչպես նաև առանձին քաղաքացիական անձինք չպետք է լինեն հարձակման օբյեկտ:

1.2 Զինված ընդհարումների ընթացքում կիրառվող մարդասիրական իրավունքի հիմնական նորմերը

1. Մարտի ընթացքում շարքից դուրս եկած անձինք, ինչպես նաև նրանք, ովքեր անմիջական մասնակցություն չունեն ռազմական գործողություններին, ունեն կյանքի, ինչպես նաև ֆիզիկական և բարոյական անձեռնմխելիության իրավունք: Բոլոր պարագաներում այս անձինք պետք է արժանանան պաշտպանության առանց որևէ խտրականության:
2. Արգելվում է սպանել կամ հաշմեղ հակառակորդին, որը գերի է հանձնվել կամ դադարել է մասնակցել ռազմական գործողություններին:
3. Վիրավորներին և հիվանդներին պետք է վերցնի և օգնություն ցուցաբերի ընդհարման մասնակիցներից այն կողմը, որի իշխանության ներքո նրանք հայտնվել են: Պաշտպանությունը տարածվում է նաև բուժանձնակազմի, բժշկական հաստատությունների, փոխադրամիջոցների և գույքի վրա: Կարմիր խաչի խորհրդանիշն այդ պաշտպանության տարբերանշանն է և պետք է հարգվի:
4. Ռազմական գործողությունների ժամանակ գերված մասնակիցները և քաղաքացիական անձինք, ովքեր գտնվում են հակառակորդի իշխանության ներքո, կյանքի, արժանապատվության, անձնական և համոզմունքների հարգման իրավունք ունեն: Նրանք պետք է պաշտպանվեն բռնության ցանկացած ակտից և պատժիչ գործողություններից, ինչպես նաև ունենան ընտանիքի հետ նամակագրության և օգնություն ստանալու իրավունք:
5. Յուրաքանչյուր ոք ունի հիմնական դատական երաշխիքների իրավունք: Ոչ ոք պատասխանատվություն չի կրում այնպիսի գործողությունների համար, որոնք ինքը չի կատարել: Ոչ ոք չպետք է ենթարկվի ֆիզիկական կամ հոգեբանական խոշտանգումների, մարմնական պատիժների, դաժան կամ նվաստացուցիչ վերաբերմունքի:
6. Պատերազմող կողմերի և նրանց զինված ուժերի պատերազմելու միջոցների և մեթոդների ընտրության իրավունքն անսահմանափակ չէ:

Արգելվում է այնպիսի զենքի կամ պատերազմելու եղանակների կիրառումը, որոնք կարող են առաջացնել ավելորդ ավերածություններ և անչափելի տառապանքներ:

7. Պատերազմող կողմերը մշտապես պետք է տարբերակեն քաղաքացիական բնակչությունը մարտիկներից, որպեսզի խնայեն քաղաքացիական բնակչությանը և օբյեկտները: Քաղաքացիական բնակչությունն ամբողջությամբ և առանձին քաղաքացիական անձինք չպետք է ենթարկվեն հարձակման: Հարձակումը պետք է ուղղվի միայն ռազմական օբյեկտների վրա:

Այսպիսով պետք է նշել <<Ջինվաժ ընդհանրումների իրավունքի>> և <<Մարդու իրավունքների>> էական տարբերությունը: Առաջինի գործունեությունը սկսվում է պատերազմական իրավիճակի սկսմամբ և վերջանում նրա ավարտով, երկրորդը գործում է ինչպես խաղաղ պայմաններում, այնպես էլ զինվաժ՝ հակամարտության ընթացքում:

Գլուխ 2. Պատերազմի ժամանակ անպաշտպան մարդկանց հովանավորումը: Ժնևի իրավունք:

1864թ. Ժնևի կոնվենցիայի հոդված 6-ը հռչակում է <<Վիրավոր և հիվանդ մարտիկներին անկախ նրանից թե որ պետությանն են պատկանում, պետք է վերցնել և օգնություն ցույց տալ>>: Այս մեկ նախադասության մեջ ամփոփված է Ժնևյան իրավունքի, որ կոչվում է նաև Կարմիր խաչի իրավունք, բուն էությունը:

Ստորև ներկայացվում է զինված ընդհանրումների իրավունքի այն նորմերը որոնք ապահովում են միջազգային զինված ընդհանրումների ժամանակ անպաշտպան անձանց պաշտպանությունը:

<<Անպաշտպան անձ>> հասկացության մեջ ներառվում են զինված ուժերի այն ներկայացուցիչները, որոնք ստացած վերքերի հետևանքով դադարել են կռվել, կամ նավաբեկյալ են և կամ կամովին զենքը վայր են դրել: Այս սահմանումը տարածվում է նաև գերյալ զինվորականների ու քաղաքացիական անձանց և, վերջապես հակառակորդի իշխանության ներքո գտնվող քաղաքացիական բնակչության վրա հատկապես ռազմական օկուպացիայի դեպքում:

Համապատասխան իրավական նորմերը գետեղված են Ժնևի 1949թ. չորս կոնվենցիաներում, որոնք որոշ առումով լրացվել են 1977 թ. Լրացուցիչ արձանագրությամբ:

Նշեմ նաև որ ՀՀ միացել է վերոհիշյալ կոնվենցիային 1993թ. մարտի 31-ին Խորհրդարանի՝ Գերագույն խորհրդի որոշումներով:

Ա. Անպաշտպան անձանց նկատմամբ մարդասիրական վերաբերմունք ապահովելու ընդհանուր պարտականությունը

Զինված ուժերի անձնակազմը, այլ անձիք՝ վիրավորվելու կամ հիվանդության դեպքում պետք է օգտվեն հովանավորությունից և պաշտպանությունից՝ բոլոր հանգամանքներում:

Հակամարտող կողմը, որի իշխանության տակ նրանք կհայտնվեն, նրանց համար պետք է ապահովվի զինված ընդհանրումների իրավունքը և խնամքը՝ առանց որևէ խտրականության այնպիսի պատճառների, ինչպիսիք են սեռը, ռասան, ազգությունը, կրոնը, քաղաքական համոզմունքները կամ այլ համանման չափանիշներ: Խստիվ արգելվում է ցանկացած ոտնձգություն նրանց կյանքի և անձի նկատմամբ, ինչպես նաև վերջ տալ կամ ոչնչացնել նրանց, ենթարկել խոշտանգումների, կատարել կենսաբանական փորձեր, միտումնավոր կերպով փողնել առանց բուժօգնության կամ խնամքի, կանխամտածված կերպով պայմաններ ստեղծել վարակման համար:

Բժշկական օգնություն ցուցաբերելու հերթականության մեջ առավելությունը թույլատրվում է միայն անհետաձգելի բնույթի բժշկական պատճառով:

Կանանց հետ վերաբերվել նրանց սեռին վայելող առանձնահատուկ հարգանքով:¹

Բ. Վիրավորներ, հիվանդներ

Ժնկի կոնվենցիաները տարբեր կանոններ էին նախատեսում՝ կախված այն բանից, թե վիրավորները կամ հիվանդները զինված ուժերից են, թե քաղաքացիական անձ են: Այդ իսկ պատճառով առանձնացան <<վիրավոր և հիվանդ>> հասկացությունը՝ անկախ այն բանից, թե տվյալ անձը զինվորական է, թե քաղաքացիական անձ: Պաշտպանությունը տարածվում է մարդկանց կամ հաստատությունների վրա և կախված չէ նրանց քաղաքացիական կամ զինվորական կարգավիճակից: Այսպիսով՝

1. Բոլոր վիրավորները և հիվանդները, անկախ այն բանից, թե որ կողմին են պատկանում, օգտվում են հարգանքից և պաշտպանությունից:
2. Բոլոր հանգամանքներում նրանց հետ վարվում են մարդասիրաբար և

[¹ 1949 թ. օգոստոսի 12-ի Ժնկի Կոնվենցիաները և դրանց լրացուցիչ արձանագրությունները]:

առավելագույն չափով ու ամենակարճ ժամկետում տրամադրում են բժշկական օգնությունն ու խնամք: Նրանց միջև ոչ մի նկատառումով որևէ տարբերակում չի դրվում՝ բացառությամբ բժշկական նկատառումների:

Այս ամենը վերաբերում է վիրավորների և հիվանդների՝ բժշկական օգնություն և խնամք ստանալու իրավունքին: Սակայն ինչպես ապահովել այդ օգնությունը պատերազմի ժամանակ:

Պատերազմի ժամանակ բուժօգնությունները գտնվում են պաշտպանության ներքո:

Դրանք այլ նպատակով չեն կարող օգտագործվել և չեն կարող լինել հարձակման օբյեկտ: Բուժօգնությունների թվին են պատկանում ստացիոնար և շարժական հոսպիտալները, դաշտային հոսպիտալները, ինչպես նաև բժշկական նպատակներով ստեղծված այլ հաստատություններ: Քաղաքացիական բուժօգնությունները, հատկապես հիվանդանոցները, որպես այդպիսին պետք է լիազորված լինեն համապատասխան պետության իրավասու մարմինների կողմից:

Հակառակորդը մշտապես պետք է հարգի բուժօգնությունների իրավունքները, այսինքն՝ չհարձակվի դրանց վրա և չխոչնդոտի դրանց աշխատանքը:

Պաշտպանությունը դադարում է այն դեպքում, երբ նման հաստատությունները բացի իրենց ուղղակի, մարդասիրական պարտականություններից օգտագործվում են այլ՝ հակառակորդին վնաս պատճառելու նպատակով: Իհարկե, պաշտպանությունը չի դադարում, եթե օգնություն ցույց տալու նպատակով բուժօգնությունն ընդունել է վիրավոր մարտիկների՝ իրենց զենքերով ու զինամթերքով:

Մասնավորապես զինված ժամապահների առկայությունը հիմք չէ հիվանդանոցը պաշտպանությունից զրկելու համար, քանի որ բուժանձնակազմը ոչ միայն իրավունք, այլև պարտականություն ունի խնամքի տակ գտնվող հիվանդներին և վիրավորներին պաշտպանելու բռնությունից, ինչպես նաև կանխելու կոդոպուտը, որի համար կարող է պահանջել զենքի կիրառում՝ ոստիկանական նպատակներով, որը թույլատրելի է: Սակայն չի կարելի բժշկական հաստատությունները պաշտպանել հակառակորդի զրոհներից: Ընդհակառակը դրանք հակառակորդին պետք է հանձնել լավ վիճակում: Այդ իմաստով դաշտային չեզոք է: Թշնամու ձեռքն

ընկնելուց հետո բուժմիավորումները սկզբունքորեն պետք է հնարավորություն ունենան շարունակելու իրենց աշխատանքը: Եվ որպեսզի բուժմիավորումներն իսկապես կարողանան օգտվել պաշտպանությունից նույնիսկ մարտերի ժամանակ, ճպետք է տեղակայված լինեն ռազմական օբյեկտների հարևանությամբ:

Բուժանձնակազմը՝ լինի քաղաքացիական թե ռազմական, այդ թվում նաև այն անձինք, ովքեր զբաղված են վիրավորների որոնմամբ կամ հավաքելով պետք է հարգվեն և պաշտպանվեն: Չի կարելի հարձակվել նրանց վրա, թշնամու ձեռքն ընկնելուց հետո էլ նրանք պիտի կարողանան շարունակել իրենց առաքելությունը: Գերված զինվորական բուժանձնակազմը պետք է զբաղվի ռազմագերիների խնամքով: Անձնակազմի այն մասը, որի կարիքը չկա, պետք է հայրենադարձվի:

Գ. Ռազմագերիներ

Ռազմագերիներն ընդհարման մեջ գտնվող կողմերից մեկի զինված ուժերի կազմից այն անձինք են, ովքեր զինված ընդհարման ընթացքում ընկել են հակառակորդի տիրապետության տակ: Գերության ընթացքում ռազմագերիները պահպանում են զինծառայողի իրենց կարգավիճակը: Դա արտահայտվում է նրանով, որ նրանք կարող են կրել իրենց համազգեստը, շարունակել ենթարկվել իրենց վերադաս սպաներին, որոնք նույնպես ռազմագերի են, և ռազմական գործողությունների ավարտից հետո պետք է անհապաղ հայրենադարձվեն: Այսպիսով ռազմագերիները գտնվում են թշնամի պետության, այլ ոչ թե առանձին անձանց կամ զինվորական ստորաբաժանումների իշխանության ներքո, քանի որ որպես Ժնևի կոնվենցիաների մասնակից, հենց պետությունն է պատասխանատվություն կրում իր միջազգային պարտականությունների կատարման համար: Գերության մեջ պահելը ոչ մի պարագայում պատժամիջոց չի համարվում:

Մի շարք անձինք, ովքեր թույլտվություն են ստացել հետևելու զինված ուժերին՝ առանց դրանց կազմի մեջ մտնելու, նույնպիսի վերաբերմունքի իրավունք ունեն, ինչ ռազմագերիները: Եվ վերջապես բնակչության այն մասը, որը կամովին զենք է վերցնում հակառակորդի ներխուժող զորքերին դիմադրություն ցույց տալու համար, պետք է արժանանա նույն վերաբերմունքին, ինչ ռազմագերիները: Գերված

բուժանձնակազմի անդամները յուրահատուկ կարգավիճակ ունեն՝ նրանք կամ պետք է ապահովեն իրենց կողմի ռազմագերիների խնամքը, կամ հայրենադարձվեն: Գերյալ անձի կարգավիճակի վերաբերյալ ցանկացած կասկած պետք է լուծի իրավասու դատարանը:

Ռազմագերիներն իրենց կարգավիճակը պահպանում են գերվարման պահից մինչև հայրենիք վերադարձվելը:

Ռազմագերիները ունեն մի շարք պարտականություններ.

- Ռազմագերին պարտավոր է հայտնել միայն իր ազգանունը, անունը, կոչումը, ծննդյան թիվը և անձնական համարը: Ոչ մի պարագայում չի կարելի հարկադրել նրան հաղորդելու այլ տեղեկություններ: Կոնվենցիան խոշտանգումները կամ այլ դաժան վերաբերմունքը դիտում է որպես պատերազմի հանցագործություն:
- Յուրաքանչյուր ռազմագերի իրեն գերության վերցնելու պահից պետք է հնարավորություն ունենա լրացնել քարտ-ծանուցում՝ գերի վերցվելու մասին, որն այնուհետև հատուկ գործակալության միջոցով ուղարկվում է նրա երկրի պաշտոնական Տեղեկատու բյուրո: Վերջինս խնդիրն է՝ տեղեկություններ հաղորդել ռազմագերու ընտանիքին: Այս կերպ արագ կապ է հաստատվում ռազմագերու և նրա ընտանիքի միջև:
- Հնարավոր ամենակարճ ժամկետում ռազմագերիները պետք է դուրս բերվեն վտանգավոր գոտուց և տեղափոխվեն անվտանգ վայրեր, որտեղ նրանց տեղավորման պայմանները <<պետք է նվազ բարենպաստ չլինեն, քան այն պայմանները, որ նախատեսված են նույն շրջանում տեղակայված նրանց գերության մեջ պահող տերության զինված ուժերի համար>>: Այդ պայմաններին, օրինակ, չեն համապատասխանում նավերը կամ քաղաքացիական բանտերը:
- Հնարավորության սահմաններում, ռազմագերիների պահպանման պայմանները հաստատելիս, պետք է հաշվի առնել նրանց բարքերն ու սովորույթները:

- Առողջ ռազմագերիները կարող են ներգրավել աշխատանքի մեջ, սակայն վտանգավոր աշխատանքի մեջ նրանց կարելի է ներգրավել միայն կամավոր հիմունքներով: Հատուկ նշվում է, որ ականագերծումը վտանգավոր աշխատանք է: Չնայած համապատասխան պատրաստություն ունեցող ռազմագերիների օգտագործումն ականագերծման ժամանակ, հատկապես եթե նրանք անձամբ տեղյակ են, թե որտեղ են տեղադրված ականները, կարող է նպատակահարմար թվալ, այնուամենայնիվ դա թույլատրվում է անել նրանց հոժար կամքով:
- Ռազմագերիները ենթարկվում են գերության մեջ պահող տերության օրենքներին, մասնավորապես զինված ուժերում գործող կանոնադրություններին ու հրամաններին: Հակաօրինական գործողություններ կատարելու դեպքում նրանց նկատմամբ կարող են կիրառվել դատական կամ կարգապահական միջոցներ: Գերության մեջ պահող տերությունը կարող է նաև դատական գործ հարուցել ռազմագերու նկատմամբ՝ նախքան գերի վերցվելը վերջինիս կատարած գործողությունների համար: Այնուամենայնիվ դատի տրված ռազմագերին արդարացի դատավարության իրավունք ունի, իսկ դատապարտվելու դեպքում պահպանում է ռազմագերու իր կարգավիճակը: Սակայն նրա հայրենադարձվելը կարող է հետաձգվել մինչև պատժաժամկետը լրանալը:
- Ծանր հիվանդ կամ ծանր վիրավոր ռազմագերիները ենթակա են անմիջական հայրենադարձման այն ժամանակ, երբ նրանց առողջական վիճակը արդեն բավարար է: Սա մարդասիրական քայլ է այն անձանց նկատմամբ, ովքեր այլևս ի վիճակի չեն մասնակցելու ռազմական գործողություններին: Հայրենադարձման մասին որոշումը կայացնում է խառը բժշկական հանձնաժողովները:
- Ընդհարման մեջ գտնվող կողմերը պարտավոր են, պատերազմական նկատառումներից ելնելով, ազատել և հայրենիք վերադարձնել բոլոր ռազմագերիներին՝ չսպասելով ռազմական գործողությունների ավարտին:

Հարկ է նշել, որ ռազմագերիները, որպես կանոն, չեն կարող հրաժարվել հրաժարվելուց: Այն բացառություն չի նախատեսում: Ավելին, ըստ այդ հոդվածի՝ բոլոր ռազմագերիներն առանց բացառության ենթակա են հայրենադարձման:

Հարկադրական հայրենադարձությունը հակասում է մարդու կամ փախստականի իրավունքներին, մանավանդ այն դեպքում, երբ ռազմագերին կարող է ենթարկվել հետապնդումների: Դա կաարող է տեղի ունենալ հատկապես այն ժամանակ, երբ գերության ընթացքում երկրում փոխվել է քաղաքական վարչակարգը:

Դ. Քաղաքացիական բնակչություն

1949թ. դիվանագիտական վեհաժողովի ամենամեծ նվաճումը եղավ պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին կոնվենցիան, որը միջազգային իրավունքի պաշտպանության տակ է առնում հակառակորդի ձեռքն ընկած անձանց:

Երբ հայացք ենք նետում պատերազմների պատմությանը, տեսնում ենք, որ ռազմական գործողություններից ամենից շատ տուժում է քաղաքացիական բնակչությունը, և այդ վիճակը հատկապես սրվում է 20-րդ դարում: Սակայն պատերազմի իրավունքը հենվում է մի շարք պարզ գաղափարների վրա ըստ որի ռազմական գործողությունները պետք է տեղի ունենան բացառապես հակամարտող կողմերի զինված ուժերի միջև: Հետևաբար պատերազմը չպետք է առնչվի քաղաքացիական բնակչության հետ: Ռազմական գործողությունները խաղաղ բնակչության դեմ երբեք հաղթանակի հասնելու ընդունելի միջոց չեն եղել: Հետևաբար քաղաքացիական բնակչությունը չպետք է մասնակցի մարտերին, և բոլոր հանգամանքներում պետք է արժանանա հարգանքի:

Սակայն ժամանակակից պատերազմների իրավիճակում քաղաքացիական բնակչությունը բազմաթիվ վտանգների է ենթարկվում: Զինված ընդհարումների իրավունքի տեսանկյունից հարկ է տարբերել երկու տեսակի վտանք, որոնք տարբեր պաշտպանական միջոցներ են պահանջում.

- ռազմական գործողություններից բխող վտանգ,

- թշնամու իշխանության ներքո գտնվող անօգնական անձանց գլխին կախված սպառնալիք:

Քաղաքացիական անձ է համարվում յուրաքանչյուր ոք, ով զինված ուժերի կազմի մեջ չի մտնում: Որպես այդպիսին նա գտնվում է միջազգային մարդասիրական իրավունքի պաշտպանության ներքո: Որպես <<ոչ մարտիկ>>, քաղաքացիական անձն իրավունք չունի մասնակցել ռազմական գործողություններին:

2.1 Քաղաքացիական բնակչության և քաղաքացիական օբյեկտների պաշտպանությունը:

1974-1977թթ. Դիվանագիտական վեհաժողովի մեծագույն նվաճումներից մեկն, անկասկած, այն է, որ վերահաստատվեց այն նորմը, ըստ որի պատերազմող կողմերը պետք է տարբերակեն ռազմական օբյեկտները քաղաքացիական անձանցից և քաղաքացիական օբյեկտներից:

<<Քաղաքացիական բնակչության և քաղաքացիական օբյեկտների նկատմամբ հարձանքն ու պաշտպանությունն ապահովելու նպատակով ընդհարման մեջ գտնվող կողմերը մշտապես պետք է տարբերակեն քաղաքացիական բնակչությանը և մարտիկներին, ինչպես նաև քաղաքացիական օբյեկտները ռազմական օբյեկտներից, և համապատասխանաբար իրենց գործողություններն ուղղեն միայն ռազմական օբյեկտների դեմ>>:

ա. Ռազմական օբյեկտներ

Ինչը կարելի է համարել ռազմական օբյեկտ, այսինքն օբյեկտ, որի վրա թույլատրվում է հարձակվել: Նախ նշեմ, որ հարձակման կարող են ենթարկվել անձինք հակառակորդի զինված ուժերի կազմից (բացառությամբ բժշկության և հոգևոր անձնակազմի) և, երկրորդ, այն օբյեկտները որոնք իրենց բնույթով տեղադրությամբ, նշանակությամբ կամ գործունեությամբ արդյունավետ ներդրում են կատարում ռազմական գործողություններում և որոնց լիակատար կամ մասնակի ոչնչացումը, զավթումը կամ չեզոքացումը ներկա պահին գոյություն ունեցող հանգամանքներում տալիս է ակնհայտ ռազմական գերազանցություն:

բ. Քաղաքացիական օբյեկտներ

Ձգտելով հնարավորինս պաշտպանել քաղաքացիական բնակչությանը պատերազմի հետևանքներից արգելվում է հարձակումը մի ամբողջ շարք քաղաքացիական օբյեկտների վրա: <<Քաղաքացիական են համարվում բոլոր այն օբյեկտները, որոնք ռազմական օբյեկտներ չեն>>: Կասկածի դեպքում <<այն օբյեկտները, որոնք սովորաբար նախատեսված են քաղաքացիական նպատակների համար, օրինակ

պարապմունքի վայր, բնակելի տուն, կամ այլ բնակելի շինություններ, կամ դպրոց»» համարվում է քաղաքացիական օբյեկտ և հարձակման չեն կարող ենթարկվել այնքան ժամանակ, քանի դեռ հրամանատարները հակառակ բանում չեն համոզվել: Հարձակումներին վերաբերող բոլոր արգելքները տարածվում են նաև պատմիչ միջոցների վրա: Հաագայի կոնվենցիայով արգելվում է <<Ժողովուրդների մշակույթային կամ հոգևոր ժառանգությունը հանդիսացող պատմական հուշարձանների, արվեստի ստեղծագործությունների կամ պաշտամունքի վայրերի դեմ ուղղված հարձակումները>>: Կոնվենցիայով պաշտպանվում են <<քաղաքացիական բնակչության գոյատևման համար անհրաժեշտ բոլոր օբյեկտները>>, այդ թվում պարենի պաշարները, անասունները, կամ խմելու ջրի մատակարարման կառույցները: Պարզ է որ այդ օբյեկտները պաշտպանվում են այն դեպքում, եթե դրանք ծառայում են քաղաքացիական բնակչությանը և ոչ թե զինված ուժերին: Մյուս կողմից, <<քաղաքացիական բնակչության շրջանում սովն արգելվում է օգտագործել որպես պատերազմելու մեթոդ>>:

Զինված ընդհանրումների ժամանակ կարևոր նշանակություն ունի հոգատար վերաբերմունքը բնական միջավայրի նկատմամբ: Հետևաբար ռազմական գործողությունների ընթացքում <<հոգատարություն է ցուցաբերվում շրջակա միջավայրը լայնածավալ, երկարատև և լուրջ վնասներից պաշտպանելու նկատմամբ>>: Քանի որ ակնհայտ է, որ ցանկացած ռազմական գործողություն հետք է թողնում շրջակա միջավայրի վրա, արգելքը վերաբերում է միայն առանձնապես լուրջ վնասներին:

Վերջապես ըստ կոնվենցիայի արգելվում է հարձակումը <<այն կառույցների և կայանքների վրա, որոնք վտանգավոր ուժեր են պարունակում>>: Այստեղ խոսքը հիմնականում պատնեշների, անբարտակների և ատոմային էլեկտրակայանների մասին է: Արգելվում է հարձակումը նրա համար, քանի որ դրանց ոչնչացումն անխուսափելիորեն աղետալի հետևանքներ կառաջացնի քաղաքացիական բնակչության համար: Հետևաբար ամբարտակները, պատնեշներն ու ատոմակայանները ռազմական օբյեկտներ չեն կարող համարվել, եթե դրանց ոչնչացումը կարող է վնաս հասցնել բնակչության առողջությանը կամ գոյատևմանը:

գ. Զինված ընդհարումների գոհերի պաշտպանության

կանոններ

Ըստ պարտականությունների բոլոր հանգամանքներում պատերազմող կողմերը մարդասիրաբար և առանց որևէ խտրականության պետք է վարվեն այն անձանց հետ, ովքեր չեն մասնակցում կամ դադարել են մասնակցել ռազմական գործողություններին: Այս անձանց թվին են պատկանում, մասնավորապես, վիրավորները և հիվանդները, գերիները և այն անձինք, ովքեր զենքը վայր են դրել: Կոնկրետացնելով այս ընդհանուր պարտավորությունը, որը սերտորեն կապված է մարդու արժանապատվության ու հարգման գաղափարի հետ, արգելվում է.

- Կյանքի և ֆիզիկական անձեռմխելիության դեմ ուղղված ոտնձգությունը, մասնավորապես, բոլոր տեսակի սպանությունները, խեղումները, դաժան վերաբերմունքը, խոշտանգումները և տանջահարությունները,
- Պատանդ վերցնելը,
- Անձի արժանապատվության դեմ ուղղված ոտնձգությունը, մասնավորապես վիրավորական և ստորացուցիչ վերաբերմունքը,
- Դատապարտումը և պատժի կիրառումը առանց դատական որոշման, քաղաքակիրթ ազգերի կողմից անհրաժեշտ ճանաչված դատական երաշխիքների առկայության:

2.2 Մարտական գործողությունների վարման արգելված եղանակներն ու միջոցները:

Մարտական գործողությունների հետ կապված, քաղաքացիական բնակչության շրջանում անհիմն զոհերից ու անտեղի տառապանքներից և բնական միջավայրին լայնածավալ, երկարաժամկետ ու լուրջ վնաս պատճառելուց խուսափելու նպատակով, մարտնչող կողմերի համար մարտական գործողությունների վարման եղանակների ու միջոցների ընտրության հարցում սահմանվում են արգելքներ ու սահմանափակումներ:

Մարտական գործողությունների վարման արգելված եղանակներից են՝

- Քաղաքացիական անձանց սպանելը կամ վիրավորելը,
- Այն անձանց սպանելը կամ վիրավորելը, որոնք վայր դնելով զենքը կամ չունենալով պաշտպանվելու միջոցներ, գերի են հանձնվել,
- Բանագնացին և նրան ուղեկցող անձանց վրա, որոնք պարաշյուտով լքում են աղետի ենթարկված օդանավը և վայելքի ամբողջ ընթացքում ու հակառակորդի կողմից հսկվող տարածքի վրա իջնելուց սկսած մինչև գերի հանձնվելու հնարավորություն տրամադրելու ժամանակամիջոցում թշնամական գործողություններ չեն կատարում:
- Հակառակ կողմի հպատակներին իրենց պետության դեմ ուղղված մարտական գործողություններին մասնակցելուն հարկադրելը, նույնիսկ այն դեպքում, եթե նրանք այնտեղ ծառայել են մինչև պատերազմի սկսվելը,
- Ոչ մեկին կենդանի չթողնելու հրաման տալը, դրանով սպառնալը կամ դրա հիման վրա մարտական գործողություններ վարելը,
- Պատանդներ վերցնելը,
- Ուխտադրությունը,
- Կարմիր խաչի միջազգային տարբերանշանը, քաղաքացիական պաշտպանության և մշակութային արժեքների միջազգային տարբերանշանները, հույժ վտանգավոր օբյեկտների միջազգային հատուկ նշանը, բանագնացի սպիտակ դրոշը, միջազգայնորեն ճանաչված մյուս

տարբերանշաններն ու ազդանշանները ոչ ըստ նշանակության օգտագործելը, հակառակորդի համագգեստը և ՄԱԿ-ի տարբերակիչ խորհրդանշանը օգտագործելը, բացի այդ կազմակերպության թույլտվությամբ դեպքերի.

- Ոչ ընտրական բնույթի հարձակումը, այդ թվում՝ այն օբյեկտների խոցումը, որը կարող է հանգեցնել քաղաքացիական բնակչության շրջանում կորստի և քաղաքացիական օբյեկտների վնասվելուն, անհամատեղելի հակառակորդի հանդեպ այն առավելությանը, որին կարելի է հասնել մարտական գործողությունների ընթացքում,
- Ահաբեկչությունը քաղաքացիական բնակչության նկատմամբ,
- Քաղաքացիական բնակչության շրջանում սովի կիրառումը ռազմական նպատակների հասնելու համար,
- Գոյատևման համար անհրաժեշտ օբյեկտները ոչնչացնելը, դուրս կրելը կամ ոչ պիտանելիության հասցնելը,
- Հարկավոր տարբերանշաններն ունեցող և սահմանված ազդանշաններն օգտագործել բժշկական կազմավորումների, սանիտարանասպորտային միջոցների վրա հարձակվելը,
- Բնակավայրերի, կացարանների, եկեղեցիների կրակային խոցումը, այն դեպքում, երբ դրանք ռազմական նպատակներով չեն օգտագործվում,
- Մշակույթային արժեքների, պատմական հուշարձանների, պաշտամունքի կատարման վայրերի և ժողովուրդների մշակույթային կամ հոգևոր ժառանգությունը կազմող այլ օբյեկտների ոչնչացումը, ինչպես նաև դրանց օգտագործումը մարտական գործողություններում հաջողության հասնելու նպատակով,
- Հակառակորդի սեփականությունը ոչնչացնելը կամ բռնագրավելը, բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի գործողությունները առաջանում են ռազմական անհրաժեշտությամբ,
- Հակառակորդի սեփականությունը ոչնչացնելը կամ բռնագրավելը, բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի գործողությունները առաջանում են ռազմական անհրաժեշտությամբ,
- Քաղաքը կամ տեղանքը կողոպտման հանձնելը:

Մարտական գործողությունների կազմակերպման ժամանակ կամ ընթացքում պետք է հստակորեն տարբերել ուխտադրությունը և ռազմական խորամանկությունը:

Ուխտադրության տակ հասկացվում է պաշտպանության իրավունքի քողի տակ թշնամական գործողության իրականացումը՝ կեղծելով զինադադարի դրոշի ներքո բանակցություններ վարելու մտադրությունը, կապիտուլյացիան վիրավորվելու կամ հիվանդության հետևանքով շարքից դուրս գալը, քաղաքացիական անձի կամ ոչ մարտնչողի կարգավիճակ ունենալը, միջազգային տարբերանշանների, նշանների ու ազդանշանների, ՄԱԿ-ի չեզոք երկրների կամ զինված ընդհարմանը մասնակից չհանդիսացող այլ պետությունների համազգեստի օգտագործման միջոցով պաշտպանություն տրամադրող կարգավիճակ ունենալը:

Արգելվում է, դիմելով ուխտադրությանը, օգտագործել; բժշկական կարգավորումների ու սանիտարատրանսպորտային միջոցների, քաղաքացիական անձանց ու ռազմագերիների տեղաշարժերը կամ նրանց ներկայությունը զորամասերի տեղաբժը քողարկելու կամ առանձին շրջանները պաշտպանելու համար՝ մարտական գործողություններ վարելիս:

Ռազմական խորամանկությունը չի արգելվում: Ռազմական խորամանկության տակ հասկացվում են զորամիավորումների վիճակի, դրության ու գործողությունների բնույթի վերաբերյալ հակառակորդին մոլորության մեջ գցելուն ուղղված գործողությունները: Դրան են վերաբերում՝ ցուցադրական գործողությունները, ապատեղեկատվությունը, նմանակումը և մարտական կանոնադրքերով նախատեսված միջազգային մարդասիրական իրավունքը չխաղտող այլ գործողություններ, որոնք ուղղված են հակառակորդին խորամանկելուն:

Մարտական գործողությունների վարման արգելված միջոցներն են՝

- Մարդու մարմնում հեշտությամբ ծավալվող կամ տափակացող գնդակները՝ ինչպես հատուկ արտադրվածները, այնպես էլ հետազայում նման ներգործության համար հարմարեցվածները,
- 400 գրամից պակաս քաշով արկերը, որոնցից՝ պայթուցիկ, պայթող կամ հրկիզող բաղադրությամբ լիցքավորվածները,
- Ցանկացած զենք, որի հիմնական ներգործությունը ռենտգենային ճառագայթների օգնությամբ մարդու մարմնում չհայտնաբերվող բեկորներով խոցումներ հասցնելն է,
- Թույլները կամ թունավորված մարտական միջոցները,
- Քիմիական զենքը, այդ թվում՝ քիմիական միջոցները, ինչպես նաև դրանց կիրառման համար նախատեսված արկերը,
- Մանրէաբանական և թունահարիչ զենքը,
- Բնական միջավայրի վրա ներգործելու միջոցները, որոնք որպես ավերման, թուլացնելու կամ վնաս հասցնելու եղանակներ, ունեն լայնածավալ, երկարաժամկետ կամ լուրջ հետևանքներ,
- Ականները, ծուղակ-ականները կամ ականառորսիչ ճառագայթումից կամ ականների հետախուզման ընթացքում այլ անշփում ներգործությունից աշխատելու համար նախատեսված հատուկ նախագծված այլ սարքեր, ցանկացած ինքնաապաստիվացող ականները՝ լիցքավորված դուրս չհանվող տարրով, որը կարող է աշխատել բուն ականը աշխատունակ վիճակի բերելուց հետո,
- Հակահետևակային ականները, որոնք հանրամատչելի ականառորսիչների օգնությամբ չեն հայտնաբերում,
- Ծուղակ-ականները, որոնք տեղադրված են ռազմական օբյեկտներից դուրս և ինչ-որ ձևով միացված կամ գուգակցված են՝ միջազգային տարբերանշանների, հիվանդների, վիրավորների կամ դիակների, թաղման տեղերի, բժշկական օբյեկտների, սարքավորումների, գույքի կամ փոխադրամիջոցների, մանկական խաղալիքների կամ հատուկ երեխաների համար նախատեսված առարկաների, սննդամթերքի կամ խմիչքի, խոհանոցի սպասքի ու պարագաների, ակնհայտորեն կրոնական

բնույթի առարկաների, պատմական հուշարձանների, արվեստի ստեղծագործությունների կամ պաշտամունքի կատարման վայրերի, կենդանիների կամ նրանց լեշերի հետ,

- Ինքնաշեն ծուղակ-ականները, որոնք ստեղծված են անվնաս թվացող առարկաների արտաքին տեսքով,
- Հեռագործ կերպով տեղադրված ականները, որոնք չեն համապատասխանում համապատասխան միջազգային պայմանագրում ամրակցված տեխնիկական պահանջներին,
- Լազերային զենքը, որը հատուկ նախատեսված է օպտիկական սարքեր չօգտագործող մարդու տեսողության օրգաններին մշտական կուրություն պատճառելու համար,
- Հրկիզող զենքը՝ ցանկացած հանգամանքներում ընդդեմ քաղաքացիական բնակչության ու քաղաքացիական օբյեկտների, ինչպես նաև անտառների ու այլ տեսակի բուսածածկույթի ոչնչացման համար՝ բացառությամբ, երբ այդպիսի բնական տարրերը հակառակորդի կողմից օգտագործվում են ռազմական նպատակներով:

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ պատերազմը ոչ խրախուսվում և ոչ էլ արգելվում է միջազգային մարդասիրական իրավունքի կողմից: Պատերազմի հարցում մարդասիրական իրավունքը հենվում է միջազգային իրավունքի՝ ՄԱԿ-ի Կանոնադրության դրույթների վրա: ՄԱԿ-ի Կանոնադրությունը, սակայն, արգելում է պատերզամը: ՄԱԿ-ի անդամ պետությունները պարտավոր են բոլոր դեպքերում տարաձայնությունները լուծել խաղաղ ճանապարհով: Այն պետությունը, որն իր նպատակներին հասնելու համար փորձում է ուժ գործադրել այլ պետության նկատմամբ, ոտնահարում է միջազգային իրավունքը և ագրեսիա կատարում, անգամ արդարացված լինելու դեպքում: Միջազգային մարդասիրական իրավունքը սկսում է գործել, երբ զինված ընդհարումը սկսվել է, անկախ սկսվելու պատճառներից:

Եզրակացություն

Ուսումնասիրելով Միջազգային մարդասիրական իրավունքը պարզվեց, որը այն կարգավորում է պատերազմի ժամանակ գործող վարքականոնները կամ պատերազմի իրավունքը: Սա միջազգային իրավունքի այն ճյուղն է, որը ձգտում է սահմանափակել զինված ընդհարման ազդեցությունը՝ պաշտպանելով այն անձանց, ովքեր չեն մասնակցում ռազմական գործողություններին և սահմանափակելով ու կարգավորելով կոմբատանտների համար հասանելի պատերազմի միջոցներն ու մեթոդները: Ավելի ստույգ՝ «զինված ընդհարումների ժամանակ գործող միջազգային մարդասիրական իրավունք» ասելով՝ ենթադրվում է միջազգային պայմանագրային կամ ավանդույթային այն նորմերը, որոնք հատուկ նախատեսված են անմիջականորեն միջազգային կամ ոչ միջազգային բնույթի զինված ընդհարումների հատկանքով առաջացող և մարդասիրական առումով մտահոգություն պատճառող խնդիրները կարգավորելու համար:

Ուսումնասիրելով Միջազգային մարդասիրական իրավունքը պարզվեց որ վերոհիշյալ նորմերը սահմանափակում են ընդհարման մեջ գտնվող կողմերի՝ իրենց ընտրությամբ պատերազմելու մեթոդներ և միջոցներ կիրառելու ազատությունը և պաշտպանում են ընդհարումից տուժած կամ նման վտանգի ենթակա գտնվող մարդկանց և գույքը:

Գոյություն ունի Միջազգային մարդասիրական իրավունքի ճանաչման զինված ընդհանրումների 2 տեսակ՝

- Միջազգային բնույթի ընդհանրումներ
- Ոչ միջազգային բնույթի ընդհանրումներ

Միջազգային բնույթի ընդհանրումն առնվազն 2 պետությունների զինված ուժերի միջև բախումն է: Միջազգային բնույթի զինված ընդհանրում է նաև ազգային-ազատագրական պատերազմը:

Ոչ միջազգային բնույթի ընդհանրումը որևէ պետության տարածքում վերջինիս կանոնավոր զինված ուժերի և կազմակերպված զինված խմբի կամ կազմակերպված զինված խմբերի միջև բախումն է:

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ զինված ընդհանրումների իրավունքի նորմերը կապաշտպանեն նրանք, ովքեր կրում են ռազմական գործողություններ վարելու պատասխանատվությունը, բայց միայն այն դեպքում, երբ դրանցում հաշվի են առնված ռազմական նկատառումները:

Համաձայն Ժնևի 1977 թվականի միջազգային պայմանագրի պատերազմելու արգելված միջոցներից է ուխտադրությունը, դա այն է, երբ որևէ երկիր կամ զինված խումբ հարձակվում են սպիտակ դրոշ պարզած կամ ձևացնում են, թե շարքից դուրս են եկել՝ օգնության շտապող հակառակորդին ոչնչացնելու նպատակով, անընդունելի են նաև ռազմական խորամանկությունը, կեղծ ռազմական գործողությունները կամ ապատեղեկատվությունը, որոնց նպատակն է մոլորության մեջ գցել հակառակորդին, այս ամենը անընդունելի են բայց ոչ արգելված:

Եվ վերջապես պարզվեց որ իրական կյանքում պատերազմը հաշվի է նստում ռազմական անհրաժեշտության պահանջների հետ: Դա, իհարկե, չի նշանակում, թե իրավունքը զենքերը վայր է դնում բիրտ ուժի առջև. Վերջինիս առջև իրավունքը վճռականորեն դնում է իրատեսական սահմանափակումներ, որոնք նա պարտավոր է հարգել: Այսպիսով ՄՄԻ-ի նպատակը պատերազմը արգելելը չէ, և կամ այնպիսի կանոնների ընդունումը, որոնք պատերազմն անհնարին դարձնեն: Նա պետք է հաշվի նստի պատերազմի գոյության փաստի հետ, մի բան, որ հնարավորություն կտա պատերազմը վարել ռազմական անհրաժեշտությամբ պայմանավորված թույլատրելի սահմաններում:

Օգտագործված գրականության ցանկ

Ձեռնարկներ

- Միջազգային մարդասիրական իրավունք,-Երևան 2002:
- Զինված ընդհարումների իրավունք,- Երևան 2003:

Օրենսդրական նյութեր

- Վ.Քոչարյան Միջազգային իրավունք,- Երևան 2002:

Ինտերնետային պաշարներ

- www.redcross.am - Հայկական կարմիր խաչի ընկերություն: